

որպէս զի յաւիտենական անարդուութեան վտանգը յանձն առնեմ: Քու այս կատակերդութիւնդ զիս չի համոզեր: Վտանգաւոր կը թուի ինծի եւ մանաւանդ իրեն համար:

— Ահա քու սովորական վախդ, վերսկըսաւ Անժանօթը: Եթէ նոյնիսկ Կայրափաքու ձեռքովդ ձերբակալել տայ զանիկա, ի՞նչ վնաս կրնայ ընել անոր: Պետրոսի պէս վստահ չե՞ս թէ Յիսուս Աստուծոյ Որդին է. եւ եթէ Աստուած է, կ'ըմբռնես որ անհրաժեշտ է եւ հարկաւորապէս անմահ: Անպատիժ կերպով չէ կարելի Աստուծոյ դպչիլ: Եւ եթէ դպչին շանթահար զետին կը տապալին, Սուրբ Տապանակին մօտեցողներուն պէս: Եւ եթէ նոյնիսկ ուղեն այրել զինքը, բոցերը իրմէ պիտի հեռանան ու հալածողները պիտի այրեն: Հանդարտ կեցիր: Ի՞նչ ալ պատահելու ըլլայ, պիտի չկարենան Յիսուսի մօտին դպչիլ:

— Բայց եթէ Յիսուս Աստուած է, ինչպէս կ'ըսես, նա մեզմէ առաջ կը գիտնայ իրեն եւ մեզի պատահելիքները. նա պիտի գիտնայ, ուրեմն, իմ մատնութիւն ձեւացումս, եւ պիտի կարենայ խափանել, եթէ նման կատակերդութիւն մը, ինչպէս կը խորհիմ, իր ծրագիրներուն հակառակ է: Եւ ի՞նչ պիտի խորհի եւ ընէ իմ նկատմամբս, յետ գիտնալու որ պատրաստ եմ իր արիւնը սակարկել իր թշնամիներուն հետ, նոյնիսկ զինքը փառաւորելու պատրուակով:

— Պիտի խորհի որ համբաւդ կը զոհես իր փառաւորութեան համար: Սակայն կ'ուզեմ որ մինչեւ վերջին վայրկեանը հանդարտ եւ ապահով ըլլաս: Գնա՛ Կայրափային եւ յանձնառու եղի՛ր Յիսուսը իր ձեռքը տալու: Աստուածորդին իսկոյն պիտի գիտնայ եւ դուն այն ատեն ուրախութեամբ գիտէ այն բոպէէն յետոյ քեզի ըսելիքները: Գրաւ կը դնեմ, որ իրիկուն մը, ընթրիքի ժամանակ, ընկերներուդ

ներկայութեան քեզի պիտի ըսէ. «Գնա՛, շուտով ըրէ ինչ որ պիտի ընես: Ըսածնեւորու վաւերացում պիտի ըլլայ բացայայտ հաւանութիւնը Անոր որ մեզմէ աւելի գիտէ: Պայմանաւորուինք. եթէ Յիսուս լռէ, մի՛ յանձներ զինք. եթէ նա զքեզ զրկէ ու յորդորէ՝ դնա՛, ըսել է որ ես իրաւունք ունիմ:

— Չեմ գիտեր թէ ինծի ի՞նչ բանի կու գան քու մարդարէութիւններդ եւ դաշինքներդ, պատասխանեց Յուդա, անօգուտ է որ շարունակես բառերու թակարդներ հրնարել: Չքեզ չեմ ճանչնար, չեմ գիտեր ո՛վ ես, եւ չեմ ուզեր քեզի հետ ոչ մէկ դործ ունենալ: Որողայթներդ չեմ սիրեր, առաջարկներդ զիս կը վիրաւորեն: Չեմ յաջողիր սիրել Յիսուսը. վայրկեաններ կան, եթէ կ'ուզես գիտնալ, կարծես կ'ատեմ զինքը, բայց կը զգամ որ անկարող եմ զինքը մատնելու: Կորսուէ՛, փորձի՛, եւ ինծի վերադարձուր խաղաղութիւնս:

Այսպէս ըսելով բարկութենէն բոլորովին բորբոքած, ուրիշ անգամ մըն ալ փորձ ըրաւ ոտքի կանգնելու, եւ այս անգամ, թէեւ դժուարութեամբ, յաջողեցաւ: Սակայն ինքզինքը յոգնած, զողողուն եւ շուարած կը զգար, իբրեւ թէ սաստիկ ջերմ մը ունեցած ըլլար:

Փորձեց քալել, բայց հազիւ երեք քայլ ըրաւ, ոտքը բռնուելով ստիպուեցաւ կանգ առնել: Դարձաւ, տեսաւ որ Անժանօթն ալ ոտքի ելած ու քովն եկած էր:

— Մի՛ փախչիր Յուդա, անօգուտ է որ հեռանաս, մարդ չի կրնար ինքիրմէն խուսել: Ի՛նչ մըն ալ մտիկ ըրէ, նոտէ հոս, եւ մանուկի պէս մի՛ դողդաղար: Գրեթէ բռնի նստեցուց թղենին մօտ դանդաղ ժայռի մը վրայ, եւ դարձեալ կողքին նըստաւ: Յետոյ բազուկը դրաւ Յուդայի ուսին վրայ. այդ հպումէն Յուդա սարսուռաց:

Թրգմ. Իտալերէնէ
(Շարունակելի)

Ճ. ԲԱՐԻՆԻ

ՆՇԽԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՆՄԱՀՆԵՐԷՆ

Այս անգամ ալ երկու նշխար: Առաջինը Դ. Վարուժանէն, ուր իր կենսագրականը լրացնող մէկ քանի կարեւոր պարագաներ կան: Միւսը՝ Մ. Չերազէն, ուր մեր ազգային գործիչն ու գրագէտը իր գնահատանքն ու հիացումն է որ կը յայտնէ Ալիշանի:

11. — ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՌ Վ. Հ. Յ. Թ.

Գերապատիւ Հայր,

Ընդունած եմ 100 Փրանց իբրեւ Յուլիսի ամսաթուղտի եւ 100 Փրանց ֆանապահաձայն: Ընդունեցէ՛ք շնորհակալութիւնս: — Կը փութամ Ձեզ յայտնել թէ քննութիւններս ամենայն յաջողութեամբ անցուցի. մէկ երկու օրէն տիպլումս կը յանձնեն ինծի: Հանցե՛ք փութացնել ֆանապահաձայնս մնացած 200 Փրանցը որ ամսոյս 15ին ուղարկուիլը կը գրէիք ինձ:

Հոգիս բարերար գոհունակութեամբ մը համակուած է, այն գիտակցութեամբ թէ ուժերուս ներածին չափ ընթացքս անցուցի բեղմաւոր կերպով, ըլլա՛յ ճիշդիս ըլլա՛յ գրականութեան տեսակետով:

Համբուրելով Աջերնիդ

Մնամ Ձերդ

Կանտ, 20 Յուլիս 1907

Պաւլէն Վարուժան

12. — ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ ԱՌ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

6 - 18 Յունվար 1877

Բարեկնորհ Հայր,

Պատիւ ունիմ յղել Ձեզ «Գրական Փորձեր» եւ «Ազգային Դատարարական» քիւն անուն գրքակներս, մին մանուկ եւ միւսն երիտասարդ հասակի արդիւն: Կը համարակիմ Ձեզ ներկայացնել գայնս, ոչ իբր Ձեր ընթերցումի արժան գործեր, այլ իբրեւ աշխատանք մի հայ գրասէրի որ կը հիանայ Ձեր հանճարի վրայ եւ որ «հին եւ նոր Հայերի առաջին քերթօղն» կը դառնի ըզՁեզ (Գրական Փորձեր, էջ 186):

Եւ միշտ Ձեր խոնարհ գարմացող

Մ. ՉԵՐԱԶ

Հասցիդ (Կոստանդնուպօլիս)